

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱԹԵՍՏԻԿԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ**  
Մոավյան 1, Երևան 375049, Հայաստանի Հանրապետություն  
հեռ. 597196

**ՏԵՂԵԿԱԹԵՐԹ 2 (Նոյեմբեր, 1991 թ.)**

Պարբերականի առաջին երկու համարների պատրաստման ընթացքում մենք կարիք ենք զգա -  
ցել ստանալու արագ և չշգրիտ տեղեկություններ համրապետության մաթեմատիկական կենտրոններից: Հրավիրում ենք բոլորին անմիջական համագործակցության:

**ԹՇԱՄՍԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ** Սույն թվի հոկտեմբերի 1-ին կայացավ Խորհրդի նիստը, որտեղ  
քննարկվեցին հետևյալ հարցերը՝ ա) միջազգային կապերի հաստատման խնդիրներ, բ) հանրա-  
պետության ուսումնական հաստատությունների մաթեմատիկական ամբիոնների վիճակը, գ) ՀՄՄ պաշ-  
տոնական "Armenian Mathematical Journal" պարբերականի հիմնադրման խնդիրը, դ) ՀՄՄ  
հովանավորության տակ մասնագիտական սեմինարների աշխատանքի կարգը: Նշված բոլոր ուղղու-  
թյուններով ստեղծված են ժամանակավոր հանձնախմբեր:

**ԹՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** Սույն թվի նոյեմբերի 20-ին ՀԳԱ Նախագահությունը հաստատեց մեր  
Միության նախագահ պրոֆ.Ա.Թալալյանին Մաթեմատիկայի խնստիտուտի տնօրենի պաշտոնում:

\* "Տեղեկաթերթ" ի նախորդ համարում հիջատակվեցին մեր մաթեմատիկուսների մասնակցու-  
թյամբ "Teubner" (Գերմանիա) հրատարակչությունում հրատարակված մենագրություններ: Հարկ է  
նշել, որ այս բոլոր գրքերը լույս են տեսել պրոֆ.Ռ.Համբարձումյանի աջակցությամբ: Լի-  
նելով հրատարակչության խմբագրության անդամ, պ.Ռ.Համբարձումյանը պատրաստ է դիտարկել և  
ներկայացնել հրատարակչությանը արժանի ձեռագրեր:

\* Հայկական հանրագիտարանը պատրաստված է հրատարակել ֆիվիկա-մաթեմատիկական տեր-  
մինների բառարան: Ենթադրվում է կազմակերպել Միությանը ուղարկված մաթեմատիկական մասի  
բառացանկի բաց քննարկումը (մանրամասությունների համար դիմել ՀՄՄ-ի գրասենյակ):

**ԹԸՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** "Տեղեկաթերթի" նախորդ համարի տպաքանակի կեսը ապահով-  
վել էր Մաթեմատիկայի խնստիտուտի աջակցությամբ (գիտական քարտուղար՝ պ. Բ.Բատիկյան):

\* Առաջին նիստի ժամանակ սեփական նախաձեռնությամբ ակոստիկ համակարգ է տեղադրել  
և բարձր որակով սպասարկել ԱՌԵԿ փոքր ձեռնարկության համանախագահ պ. Ա.Մովսեսյանը:

Ընորհակալություն ենք հայտնում բոլորին:

**ԹՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** Նոյեմբերի 26-ին (երեքարթի), ժ.18.30 նշանակված է ՀՄՄ  
ընդհանուր գիտական նիստը: Ձեկուցող՝ պրոֆ. Նորայր Ենգիբարյան (Բյուրականի աստղադիտա-  
րան):

**ՏԱԿԱՑՈՐԴՉԱՅԻՆՅԻ ԽՆԴԻՐՆԵՐ ԽՆՏԵԳՐԱԼ ԵՎ ԳԻՖԵՐԵՆՑԻԱԼ  
ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵԶ**

\* Հաջորդ նիստում, դեկտեմբերի 17-ին նշանակված է պրոֆ. Նազարեթ Թովմասյանի (Պո-  
լիտեխնիկական ինստիտուտ) վեկուցումը.

**ԵԶՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍԱԿԻ ՄԱՍՆԱԿԻ  
ԱԾԱՆՑՅԱՆՆԵՐՈՎ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

Հրավիրվում են ՀՄՄ բոլոր անդամները:

\* Մեր Միության անդամ, կիրառական խնդիրների մաթեմատիկական մոդելավորման և ծրա-  
գրավորման բազմամյա փորձ ունեցող մասնագետը վիտրում է աշխատանք: Մանրամասությունների  
և առաջարկությունների համար դիմել ՀՄՄ գրասենյակ:

**ԹԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** Հիշեցնում ենք, որ այս տարվա անդամավճարը (35-ը) կարելի է  
մուծել Միության ատենապետ պ. Վ.Շիհանյանին (համալսարան, հավանական, տեսության ամբիոն):

**ԹՀԱԿԵԼՎԱԾԸ** Այս համարից սկսում ենք հրապարակել ՀՄՄ-ին դիմող և Խորհրդի կողմից  
հաստատված անդամների ցուցակը (ըստ ներկայացված դիմումների ժամկետի): Տվյալների փո-  
փոխությունների դեպքում խնդրում ենք տեղյակացնել ՀՄՄ-ի գրասենյակ: